



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2023թ. 2-րդ եռամսյակ


ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ*

	Ցուցանիշը մայիս/հունիսի դրությամբ	12-ամսյա փոփոխությունը
ԱԿՏԻՎՆԵՐ	8.28 տրլն դրամ	14.03%
Տրամադրված վարկեր	4.23 տրլն դրամ	14.29%
Վատորակ վարկերի կշիռ (ներառյալ հսկվող դասը)	4.35%	-0.55 տոկոս. կետ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6.98 տրլն դրամ	13.28%
Ներգրավված ավանդներ	4.66 տրլն դրամ	26.47%
ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	1.3 տրլն դրամ	18.16%
Ընդհանուր կապիտալի համարժեքություն	20.19%	+1.59 տոկոս. կետ
Ընդհանուր իրացվելիություն	36.53%	+4.95 տոկոս. կետ
Կապիտալի շահութաբերություն	19.75%	+7.07 տոկոս. կետ
Ակտիվների շահութաբերություն	3.02%	+1.31 տոկոս. կետ


* Տեղեկատվությունը ներկայացված է 2023թ. մայիս ամսվա դրությամբ: Բացառություն են կազմում վարկավորման հոսքային ցուցանիշները և բանկային համակարգի հաշվեկշռային ցուցանիշները, որոնք 2023թ. հունիսի 25-ի դրությամբ են: Վարկեր/ՀՆԱ ցուցանիշը, Ֆինանսական ցիկլի ինդեքսին վերաբերվող ցուցանիշները ներկայացված են 2023թ. հունիս ամսվա դրությամբ գնահատականներով:

Վարկավորման շուկայում աճի տեմպերը* գրեթե չեն փոխվել

Վարկերի պաշարային ցուցանիշի տ/տ աճը ըստ ոլորտների




Տնային տնտեսությունների վարկերի պաշարային ցուցանիշի տ/տ աճ




* Փոխարժեքի ազդեցությամբ ճշգրտված

Վարկերի դրամայնացումը շարունակվել է

Տնային տնտեսությունների վարկերի աճի տեմպերի տրոհումը ըստ արժույթների




Քիզնես վարկերի աճի տեմպերի տրոհումը ըստ արժույթների




Վարկերի հոսքային ցուցանիշների աճը շարունակվել է

Վարկավորման հոսքային ցուցանիշների տ/տ աճի տեմպեր




Սպառողական և հիպոտեկային վարկերի տարեկան հոսքերի աճի տեմպերը




Վատորակ վարկերի կշիռը գրեթե չի փոխվել

Վատորակ վարկերի կշիռ* և վարկերից կորուստներ




Վատորակ վարկերի կշիռն ըստ վարկատեսակների




* Ներառյալ հսկվող դասակարգված վարկերը

Ռիսկերի կլանման ունակությունը շարունակում է մնալ բարձր

Կապիտալի համարժեքություն




Կապիտալի շահութաբերություն և լներիջ




Չուտ ոչ տոկոսային եկամուտների ծավալը շարունակում է մնալ բարձր, սակայն 2022թ. համեմատ առկա է որոշակի նվազում, որի արդյունքում վերջինիս նպաստումը եկամտաբերության փոփոխությանը բացասական է

Ըստ կապիտալի եկամտաբերության փոփոխության տարանջատումը




Որոշակի տատանումներով հանդերձ՝ արտարժույթային իրացվելիությունը շարունակում է բարձր մնալ պահանջվող նվազագույն մակարդակից

Բանկերի իրացվելիության նորմատիվները և վարկ/ավանդ հարաբերակցությունը




Իրացվելիության ծածկույթի գործակից




Ավանդների աճի տեմպը տարեսկզբից դանդաղել է

Ընդհանուր ավանդների և ըստ արժույթի ավանդների եռամսյակային աճի տեմպերը*




Տնային տնտեսությունների և իրավաբանական անձանց ավանդների ծավալները*



* Փոխարժեքի ազդեցությամբ ճշգրտված

Ֆինանսական ցիկլի ինդեքսը գրեթե չի փոխվել


Ֆինանսական ցիկլի ինդեքսը*




*Այս ցուցանիշի 2023թ. 2-րդ եռամսյակի արժեքները հիմնված են դրանց հիմքում ընկած ցուցանիշների (ՀՆԱ, վարկեր և այլն) գնահատականների վրա, և ապագայում փաստացի տվյալների ստացման արդյունքում կարող են որոշակի փոփոխություն կրել

Վարկեր/ՀՆԱ ճեղքը շարունակում է մնալ բացասական

Վարկեր/ՀՆԱ ցուցանիշը և դրա երկարաժամկետ տրենդը



Վարկեր/հարթեցված ՀՆԱ ցուցանիշը և դրա երկարաժամկետ տրենդը*




* Ցուցանիշը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով ՀՆԱ հարթեցված շարքը

Հիպոտեկային վարկերի և անշարժ գույքի շուկայում գերտաքացման ռիսկերը պահպանվել են


Վերջին տարիներին հիպոտեկային վարկերի և անշարժ գույքի գների բարձր աճի տեմպերը փոխլրացրել են միմյանց

Հիպոտեկային վարկեր և անշարժ գույքի գին



Անշարժ գույքի շուկայում գների շեղումը հիմնարարներով պայմանավորված գներից կազմել է մոտ 27%*

Անշարժ գույքի գնի շեղումը հիմնարարներով պայմանավորված գներից



* Այս գնահատականի հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ դեռևս նախորդ տարիներից արձանագրված անշարժ գույքի վարձակալական վճարների աննախադեպ բարձր աճի տեմպերը ժամանակավոր բնույթ են կրում և երկարաժամկետ հեռանկարում կարող են չպահպանվել: Նախքան հաշվարկներում ներառվելը վարձավճարների շարքը նախապես հարթեցվել է՝ այս էֆեկտը բացառելու նպատակով: Վերը բերված գծապատկերում ներկայացված է նաև չճշգրտված տարբերակը, որի համաձայն գերարժեքի չափը մոտ 13% է: Անշարժ գույքի հիմնարարներով պայմանավորված գնի գնահատման մեթոդաբանությունը առավել մանրամասն ներկայացված է ՀՀ ԿԲ 2021թ. Ֆինանսական կայունության հաշվետվության Ներգիր 3-ում, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_2022.pdf

Հաշվի առնելով, որ

- ✓ Վարկավորման շուկայի ընդհանուր զարգացումները ցույց չեն տալիս ռիսկի կուտակման նախանշաններ և
- ✓ Ֆինանսական համակարգում ցիկլային համակարգային ռիսկերը շարունակում են գտնվել այնպիսի մակարդակում, երբ ռիսկերը ո՛չ չափից ավելի թերագնահատված են, և ո՛չ էլ զսպված

ԿՀԲ դրույքաչափը մնացել է անփոփոխ՝ 1.5% մակարդակում